դիկներից մուխ էր բարձրանում: Շների ձայնից մի խումբ երեխաներ, կանայք եւ աղջիկներ դուրս սողացին նեղ դռներից եւ կտուրների վրայից սկսեցին նայել մեզ վրայ: Մէկը բաժանուեցաւ նրանցից եւ, յենուած երկու թեւքերի տակին առած երկու ցուպերի վրայ, սկսեց կաղալով մօտենալ մեզ: Երբ հասաւ, նա մի երկբայական հայեացք ձգեց մեզ վրայ, մի քանի րոպէ կանգ առեց եւ ապա լուռ նստեց: Քուրդը առհասարակ քաղաքավարի է լինում, երբ հանդիպում է օտար մարդու, բայց նա մինչեւ անգամ չողջունեց մեզ: Երեւի նա տատանւում էր, թէ ինչ ձեւով ողջունէ, որ չվիրաւորէ մեզ, որովհետեւ մահմեդականը զանազան ձեւերով ողջոյններ ունի իր լեզուում, նայելով մարդու աստիճանին, ազգութեանը, կրօնին եւ այլն: Նրան անյայտ էր, թէ մենք ինչ մարդիկ ենք, այդ պատճառով բարւոք համարեց լուռ մնալ:

Սկզբում մենք նրան մուրացկանի տեղ ընդունեցինք, եւ նրա հնոտի հագուստը վկայում էր այդ: Բայց այդ հնոտիքի մէջ նշմարւում էր մի աչքի զարկող հպարտութիւն: Շալէ գօտիի մէջ, կուրծքի վրայ, խրած ունէր մի փոքրիկ խենջար, որի աբենոսեայ սեւ կիթը զարդարած էր արծաթով եւ գունաւոր քարերով: Այդ զէնքը արդէն նշան էր նրա ազնուական ծագման:

Գետնափոր խրճիթից յայտնուած ազնուականը, վերջապէս, խզեց իր լռութիւնը, հարցնելով.

— Ծխախոտ ունէ՞ք:

— Ունենք, — պատասխանեց Մուրադը, որ լաւ քրդերէն գիտէր:

— Հեռուից տեսայ ձեզ, եկայ մի փոքր ծխախոտ խնդրելու:

Մուրադը տուեց նրան բաւականաչափ ծխախոտ, որը մեծ շնորհակալութեամբ ընդունեց: Նա իսկոյն վառեց ծխաքարշը, սկսեց ծխել: Երեւում էր, որ երկար ժամանակ չէր ծխել:

Նա, դարձեալ յենուած իր թեւքերի տակ առած ցուպերի վրայ, սկսեց կաղալով դիմել նոյն խրճիթը, որտեղից դուրս էր եկել: Բայց քառորդ ժամ չանցած, նա կրկին վերադարձաւ իր հետ ունենալով մի այլ մարդ: Այդ վերջինը դրեց մեր առջեւ մի մաղ լի նոր թխած հացերով, որոնց մօտ դրած էր պանիր, որ մակարդուած էր զանազան անուշահամ բոյսերով եւ սէր, որ երկու մատի հաստութեամբ լաւաշի ձեւ ունէր: Հպարտ ազնուականը չկամեցաւ պարտաւոր մնալ մեզ եւ բերեց մեզ համար մի լաւ նախաճաշիկ: Մենք սկսեցինք ուտել.

— Դու ո՞ր ցեղից ես, քիրվա՛յ, — հարցրեց Մուրադը:

(Չգիտեմ ինչ՞ հայերը սովորութիւն ունեն քրդերին դիմել Քիրվայ բառով, որը նշանակում է կնքաւոր):